

Սասունն ա, էս ի՞նչ քարեր էք դրել, սասունն <sup>1)</sup> քարեր ա, ըտուհումն մնաց (Սասունն) էդ քաղաքի անունը։ Ըտեղ եփօր ժողովան մի քսան — եռասուն տուն, կեղ էլան իրանց հումա՝ Քեռի Թորոսը պերեց բրիստոնէի աղչիկներ առաւ մէկը Բաղդասարին, մէկը Սանասարին, պրեսկեց։ Իրանց հումա քրհանայ օձեցին, Սանասարին էլ դրին թաքաւոր Սանունայ մէջ։

## Բ.

## ԸՄԼԵԼ ՆԻ ԻՅԽՈՆ

Մէկ տարի էրկու տարի մնաց, Սանասարի կնիկը պառկաւ, էրկու տղայ պերեց։ Քրհանէն պերեցին, կնքեցին, մէկի անունը դրեցին Իշխան, մէկինը՝ Որլաղ։

Ժամանակ ընցաւ արանքիցը՝ շատ ժամանակ։ Էդ տղերքը դարցան <sup>2)</sup> ամէնքը քսան տարեկան։ Ըտոնց հէրը, Սանասար, վախճանուաւ։ Բաղդասարն էլ վախճանուաւ։

Շրլաղն ու Իշխանը լաւ ձիանք ունէին։ Ծովասար կար՝ կ'էթացին ընտեղ սեհր անելու <sup>3)</sup>։ Էն ժամանակն էլ Բաղդասար լաւ լիֆայ կար, էն էլ կուսկաշտ էր, ընդուր ժողովուրթն էլ զալում էր Ծովասար լալլաղ <sup>4)</sup>։

Եփօր Իշխանն ու Որլաղը կնացին սեհր անելու Ծովասար, կնացին կուսկաշտերու մէկի չափի գուռը, դիան որ ըտեղ մի գեղեցիկ ախլիկ կայ։ Որլաղն առաւ, թէ «Ի՛շխան, ես պէտք է էս ախլիկն առնեմ, որ չառնեմ կը մահանամ»։

Իշխանն առաւ. «Մենք բրիստոնեայ ենք, մեզի կը սնդի կանք էդ կուսկաշտի ախլիկն ուզենք»։

Որլաղը պատասխանեց, թէ, «Որ մենք կուսկաշտերուց չ'առնինք հացնենք, թեքնենք մեր հաւատի վըրէն, ինչո՞վ պէտք է մեր Սասունը հաստատենք թէ մենք մեր աուրը Սատուածը կանչելով մեր թրի զօռով մենք պէտք է կուսկաշտները դարցնենք, Սասուն քաղաքը շիկենք»։

Առաւ «Ի՞նչ գինաս, ախլէր»։

Կնացին էդ մարթու ախլիկն էլ ուզեցին, էդ մարդն էլ իր ջանի

<sup>1)</sup> Ենգին, սաքսալիկի <sup>2)</sup> Դարձան <sup>3)</sup> Զբօսեցելու <sup>4)</sup> Եալլաղ, ամաւրանց։

երկրագիցը տուեց: Էնպէս խօսք տուեցին, որ ամսից ետ կան էդ ակսիկը տանեն, քանի որ էլը չի քոչէ: Կնացէ Բաղդատայ՝ Էդ ակսիկին էլ, դու մի ասա, Բաղդատայ խալիֆի խեւտ նշան դրուած ա ըլնում: Ըտեղ խօսք տալում են իրարու, եղ են դառնում գոյում են Սասուն: Էդ իրանց արած գործը՝ Քեռի-Թորոսին պատմում են: Քեռի-Թորոսը պատասխանում ա, թէ՛ չեմտ լաւ էք արէ: Համա շուտով մեր գործը աւարտէք գնացէք էդ ակսիկը պերէք, որ էլը <sup>1)</sup> չը քոչի էթաց, Բաղդատայ խալիֆէն էլ կատնի էդ ակսիկը ձեր ձեռնից: Դու էլ, քաղաքն անտէր ա մնացել, դու էլ պըտի ըլիս թաքաւոր. դնա ամուսնացիր արի, որ ըլիս, — քանի որ ազար <sup>2)</sup> մարդը չեն անում էն վախտը:

Էդ մարդիքը թամբիր <sup>3)</sup> արեցին իրանց հըմար, գնացին դըբայ էդ ակսիկը, Ծովասար, քանի որ էդ Ծովասարը Բաղդատայ խալիֆի ձեռնի էր, ընտուր Հպատակին էր: Գնացին Հասան էն չաղըր, բարև տուեցին, նստան: Թէ. «Ինչի էկ էկել»:

Թէ. «Իկիր ենք մեր Հախլուն <sup>4)</sup> տանինք»:

Էդ մարդն ասաւ, թէ՛ հըմիկ դուք կպեր էք իմ եսխէն՝ ժամանակին էլ դուք ընծի տիրապըտէք, որ Բաղդատայ խալիֆէն իմ քորը կ'էրիցընայ <sup>5)</sup>, իմ ակսիկը ընդուր նշանածն առ:

Էշխանն Որլաղին ասում ա, թէ՛. «Ձունքի Բաղդատայ խալիֆէն նշան դրած ա, արի ձեռ. քաշի էթանք. բալքի ակսիկայ տիրտը էն թաքաւորին առ»:

Որլաղն ասում ա. «Անհնար ա, ես պըտի էս ակսիկը տանում, Բաղդատայ խալիֆի ձեռից ինչ կայում ա՝ թօ անի»:

Էս էրիւր ակսիկով վեր են ունում իրանց Հախլուն ու էթում: Ե իօր որ տանում են Հասցնում Սասուն՝ Քեռի-Թորոսը քհանայ ա պերում, ակսիկան մկրտում են, Հայացնում, պատկում ա էդ ակսիկը Որլաղի վերէն: Պատկը որ պըծնում է՝ բերում են Որլաղին անում են թաքաւոր:

Ջու արաւ էդ Ծովասար Բաղդատու խալիֆու ձեռից առաւ, էլը սըպանեց, չը թողաւ որ լաչաղ կան ընտեղ, թէ. «Բաղդատ որ տեղ ա, Ծովասար որտեղ ա, չեմ տայ ձեզի, գնացէք»:

Էն գէս սովորութիւն ին <sup>6)</sup> էրած էրիւր ակսիկով. — էն մաչըտի իրեք ամսին կէթին լաչաղ էդ Ծովասար: Ուրիշ մէկ մարդ էլ չեն տանի իրանց խեւտ. իրանց ձիանքը կը խեծնին, կ'էթաչին. մէկը բող էր, մէկը՝ կարմիր. խրեղէն ձիանք ին, ծովից դուս էկած ձիանք ին:

<sup>1)</sup> Քոչը: <sup>2)</sup> Ամուրի, չամուսնացած: <sup>3)</sup> Պատրաստութիւն տեսան իրանց համար: <sup>4)</sup> Հարուր: <sup>5)</sup> Արմատու կալքի: <sup>6)</sup> Անց. անկատարի յոգն. Յորդ. դէմ. քր—կին:

Եվօր Բաղդատայ խալիֆէն լսեց թէ էդ մարդիկը իրեք ամիս դնում են լալազ, Ծովատար, ասաւ, Քաղաքն անտէր ա մնում, գնամ առ ու ետիւր <sup>1)</sup> անեմ պերեմ):

Էն ժամանակը, որ Բաղդատայ զօռունը ժողովեց պերաւ Սասունայ չորս բոլորն առաւ ու կայնաւ՝ մարդ ճամբեց քեռի-Թորոսին, թէ «Նա <sup>2)</sup> իմ դանիմը <sup>3)</sup> տուր, որ կայ ինձ խետ կռուի, ես էլ չէ՝ քաղաքդ առ ու ետիւր կանեմ կը տանեմ):

Քեռի Թորոսն ասաւ. «Ղանիմ չը կայ, որ տամ ինքը գիղայ իրա Աստուածը, ինչ կարայ թօ անի):

Լցուաւ զօռունը Սասնայ մէջ, Ինչքան էզ ու որց կար՝ ամեն բան առ ու ետիւր արաւ կնաց):

Էդ քշեր Յովասարին Իշխանն էրազ տեսաւ: Էրազի միջին տեսաւ, որ աշխարհ լուս էր ու արև էր, Սասուն՝ մուրն ու խաւար:

Ձէն տուեց Ուլաղին, վեր խանեց, թէ. «Վեր, ես մի զարմանալու էրազ եմ տեսեր): Էրազը պատմեց ախպօրը, թէ, «Նա տեսայ, աշխարհ լուս էր, արև, Սասուն՝ մուրն էր, խաւար):

Ասաւ. «Աղպէր, ես էլ եմ էդ էրազը տեսէ):

Ասաւ. «Մեր ազգին տուովի ա, մեր ձիանքն իմաստուն ին, որ մեր ազգը ննդութեան մէջ ըլնի՝ ձիանքն իրանք իրանց մըտըրքի տակը կը քանդեն, վեկաց տես):

Իշխանն էլաւ տեսաւ, որ իրանց ձիանքը ամէնքը մի չութի չափ քանդել են մըտըրներու տակը:

Ուաւօտը որ լուսը պացուաւ՝ ձիանքը հեծան, էկան Հասան Սասուն: Որ էկա՝ Հասան Սասուն, տեսան որ քաղաքին մարդ չը կայ, բիրադի առ ու ետիւր արած տարած են: Դէս ման էկան, դէն ման էկան, տեսան, որ մէկ ֆորից մին նըւոց ա գալիս մարդու: Ձին քշեցին գնացին ֆորի վըրէն կայնան, տեսան, որ մի պատաւ օղլուշաղ <sup>4)</sup> ա, զօռունի ձիանքի հետ էկել ընկէ էզ ֆորը: Ֆորից դուս պերեցին պառաւին, Հարցին, թէ. «Էս քաղաքի մարդը ուր ա, պանաւ):

Պատաւը պատասխանեց, թէ. «Ոչ Իշխանն ըլնի, ոչ Ուլաղը, ոչ էլ իրանց թաքաւորութունը. կնացին էն կռապաշտի էն լիւրբ ախիկը պերեցին, Բաղդատայ խալիֆէն իմացաւ որ իրանք քաղաքին չեն՝ էկաւ էն մէկ օղլուշաղի Հըմար քաղաքը առ ու ետիւր արաւ կնաց):

Ասաւ. «Պանաւ, որ կողմովը տարաւ):

<sup>1)</sup> Աւար և գերութիւն: <sup>2)</sup> Ամա... կամ: <sup>3)</sup> Հաճախորդ. մարդիկ:

<sup>4)</sup> Ախալաբա:

Թէ՛ «Էս կողմովը տարաւ»:

Ղօշուկի իցը <sup>1)</sup> առան ու կնացին: Կնացին, մէկ օր, էրկու օր ճանապարհ կնացին, տեսան որ մէկ տիւզղեա՛հ տեղ <sup>2)</sup> Բաղդատայ խալիֆէն ղօշուկը յագր ա տուեր. ուտում են, խմում են, քէֆ են անում իրանց հրմար, հայայ չեն հասել Բաղդատ:

Էդ մարդիկն էլ մօտեցան ղօշուկին, իջան ձիանքուց, ձիանքոցը բըխովեցին, իրանց հրմար գինջըցան, հոց կրան, մինչև արևը մտաւ: Եփօ որ արևը մտաւ, էկաւ գիշերը, Արլաղն ասաւ. «Իշխան, դու մի ձիանքուն մուղթ արա, ևս էթամ մի ղօշուկի մէջը պըտըտուիմ գամ»:

Իր նետ ու տնեղը, գիւրը վէ կալաւ կնաց ղօշուկի մէջ սկսեց պըտըտել: Տեսաւ, որ ղօշուկի մարդ, մէկը ձի ա քորըմ, մէկը քներ ա, մէկը հաց ա ուտում, մէկը՝ ուրախութուն ա անըմ. ըստուր էլ չեն ճանաչում, ղօշուկն ա: Մանկալով կնաց հասաւ Բաղդատայ խալիֆի չաղրին: Իշկեց, տեսաւ որ Բաղդատայ խալիֆէն ու իր կնիկը սաղրինջ <sup>3)</sup> են խաղում:

Շտ դարձաւ էկաւ Իշխանի կուշտը: Միասին էրկու ախպէր, իրանց ձիանքի կշտին քնեցին, ղօշուկից դրադ Լուար որ բացուաւ՝ ասաւ թէ. «Իշխան, դու գնա ղօշուկի ցածի եանը, ես կնամ վերի եանը, սկսենք ղօշուկը քարդել»:

Եփօր կնացին ղօշուկի ամէնքը մ. եանը կաշնան, սկսեցին, ինչպէս որ իրանց նախնեաց մէջի սովորութուն էր, — Իշխանը աղօթք արաւ կանչեց. «Օրհնեալ բարերար, կամքն օրհնեալ, էն Արարողին, կանչենք սարերու սրբեր, ձորերու կոյս Մայր Աստուածածին, դու ըլիս օգնական — պահապան այս Իշխանին»: Արլաղն էլ ղօշուկի էն հանին կանչեց, աղօթք արաւ. «Օրհնեալ բարերար, կամքն օրհնեալ՝ էն Արարողին կանչենք, սարերու սրբեր, ձորերու կոյս Մայր — Աստուածածին, դու օգնական պահապան ըլիս էս Արլաղին»:

Սկսեցին ղօշուկը քարդել: Թէ իրանք ամէնքը մի լիցուն ջան թրով սրով են սըպանում՝ ձիանքն է իրանց բերնով, ոտներովը հարուր ջան են սըպանում: Վերջը էն ղօշուկը էնպէս քարդեցին, որ Բաղդատայ խալիֆէն մէ չորս ձիաւորով անջախ փախաւ պրծաւ:

Շտով էդ երկու աղպէր, եփօր քարդեցին ղօշուկը պրծան, էկան իրար պատահան: Յալքըները արուն լցուած. քանի որ էնքան մարդ քարդեր են, ձիանքն էլ արունի միջին կորեր են, — իրար չը ճանանչեցին: Իշխանը ձին քէնց Արլաղի վրէն, ասաց. «Քո մէջը, քո կնիկը»:

<sup>1)</sup> Հետք: <sup>2)</sup> Դաշտ: <sup>3)</sup> Հախմատ. ուրիշ վարիանտներում այս խաղը այլ տեսակ խաղ է:

մնացեալ ինչքան ուժով մարդ ես դու, որ չես սրպանուէ ես չես փախչի»:

Ասաւ. «Քեզնից փախնող տղայ չը կայ ըստեղ. մեռնէդ ինչ կալում ա՛ արա»։ մէկ դիւրող Իշխանն Աբլաղին տուեց. որ տուեց՝ Աբլաղն հէնց իմացաւ սարն է՛կաւ իր վրէն: Ասաւ. «Էս կայ չ՛կայ, մեր քրնսիցն ա. ազնւանց <sup>1)</sup> քնսիցն ա (դրա հրմար են ասում ընդոնց քրնսին . «Սասունայ ճաեր»)»:

Աբլաղն ասում ա. «Սրէն <sup>2)</sup> իմն ա»:

«Քեզնից փախնող տղայ չը կայ, ասում ա, արի»:

Աբլաղը բարկացաւ, ձիուն մէ գանգու տուեց, ձինն ու քինքը թափով կնաց գիւրգով տուեց Իշխանին: Իշխանն ալբըհալը <sup>3)</sup> ձիուցն ընկաւ: Յիշաւ որ վիզը կտրէր: Ասաւ. «Ա՛ստուած, դու իմ կոխը կտրեցիր, բա Աբլաղի՛ կոխը ոնց պրտի կտրես. հըմի Աբլաղը կը գայ»:

«Դու ինչ մարդ ես, ասում ա, որ Աբլաղին ճանաչում ես»:

«Շա նրա փռքը եխպարն եմ»:

Աբլաղը տեսնում ճանանչում ա, որ իրա աղպէրն ա:

«Տուևդ քանդուխ, Աբլաղն ասում ա Իշխանին, էն գիւրգը որ դու տուեցիր ինձ՝ քնացայ որ մեր ազգիցն իր, էնքան ա, որ արուներ աչքերս լցուեր էր, քէ չը ճանաչեցի»:

Վեր ա ունում ավապօրը, հեծնում են ձիանքը, իրանց եսիրն էլ ետ են դարձնում իրանց գեղը Սասուն, էդ եսիրի հետ էլ պերում ա Աբլաղը իրա կնկանը: Գալում են գեղը: Մէ առ ժամանակ արանքից քրնցնում ա Աբլաղն ընկնում մեռնում ա. Աբլաղը որ ընկնում մեռնում ա՝ ըզրա կնիկը էրեխով ա ըլնում: Էս անգամը, որ Աբլաղը մեռնում ա, Իշխանը իր ձինը հեծնում ա, ասում ա Վեռնի-Թորոսին. «Դու գինաս քաղաքը, ես էթում իմ ճգնութուն անելու սարը, անտառները: Իրը մի փոքրաւոր ծառայ վերցնում ա հետը, ձինը հեծնում ա ու էթում, էթում սարը ճգնութուն անելու»:

Գ.

### Գ Ե Թ Ն Ի Կ—Ո Ր Ր Ի Կ

Էդ օգուշաղը, Աբլաղի կնիկը, ժամանակին ազատուում ա ու մէկ տղայ ա պերում: Քրհանէն պերում են կնքում են էդ տղին: Տէրաւորը հարցնում ա, թէ. «Քեռի-Թորոս, տղի անունն ինչ դնենք»:

<sup>1)</sup> Ազնանց ցեղից: Ազնանց ցեղից, նայնն է թէ դիւ ց-ազն: Պատմօրը րացատրեց, թէ այդպէս էր կոչուում այդ ցեղը նրա համար, որ իւր սերունդները պարթեւ, հակայ, հին, միանայն ժամանակ աստուածային ծագումն ունեցող, և թէ—թիւրքերէն ազնաւոր նշ. է դէ, հոգի առնող հրեշտակ, որից և ազնանց: <sup>2)</sup> Լերթ: <sup>3)</sup> Խակոյն: